« քային կու լինի. ապա ծովայինն մեծ կու
« լինի, անչափ ահագին՝ որ տեսնողքն կզգի
« կու կարծեն. ասեն ոմանք ի պատմութեանց,
« թէ ի ովկիանոս ծովուն նաւորդքն ի կղզի
« մի ցամաք եղին, և երկաթն ի ծով ձգե-
« ցին, կրակ վառեցին, ուզէին որ ուտելու
« եփեն, յետոյ սկսաւ տաքնալ կռնակն
« կրեային, և նա սկսաւ կամաց կամաց ի
« ծովն մտանել. տեսան որ կղզին ի ծովն
« կու իջանէ. թողին զկերակուրն և զայլ
« անօթեան, և հազիւ փախեան, ի նաւն
« մտան, իմացան որ ցամաք չէր այլ կրիայ
« էր։ Եւ այլ շատ հանդիպել է Հնդստանայ
« նաւորդքն՝ այնպէս մեծամեծ կրիայներուն։
« — Ասեն, թէ յորժամ կրիայն ձուս ածէ
« և նստի ի դիմացն հայի. և հայէցքն նորա
« ի նա դիպի և ձագս հանէ. վասն այն զի
« միտքն այլ տեղ չէ՝ բայց միայն ի կիթն.
« քանզի հրամայէ Տէրն մեր, թէ ոչ կարէք
« երկուց տերանց ծառայել, Աստուծոյ և
« մամոնայի. և թէ ուզէ մարդս որ խրն-
« դրուածքսն կատարի, միտքն այն խորհուրդն
« պիտի և ոչ այլ տեղ», և այլն... Դեռ
երկայն խրատներէ վերջը՝ յայտնապէս կ'ըսէ.
« Թէ Կրիայն ի վերայ ձուին նստէր, չէր
« լինիր, այլ ամենայն ձուքն ջախջեղվեր.
« ապա անհնարինքն հնարաւոր (են) մնա
« Աստուած, թէ մարդս սրտով հայցէ»։
Յետոյ շարունակէ ստորագրութիւնն. « Եթէ
« որձն՝ հետ էգին ուզէ մերձաւորել և էգն
« փախչի և չի թողու որ մտնեցայ, երթայ
« որձն և խոտ մի գտանէ, առնու բերանն
« և գայ ի դիմաց էգին, և էգն որ տեսանէ
« զխոտն՝ խնարհի և հնազանդի նմա. զայն
« խոտն՝ ազամորդիքս չեն կարեր գտանել,
« միթէ ի բերանն կրիային տեսանեն և
« առնուն. այն խոտին Մէրմէրգիլեան? ա-
« սեն. օձն ի բերանն առնու զայն խոտն
« և գուտն ի գլուխն դնէ, ուզէ որ ծած-
« կէ զգլուխն, և զգլուխն ի ներս կու քաշէ.
« և խոտուն սիրուն անչափ հարկանէ զգլուխն
« ի վերայ խոտին, որ ինքն այլ կու մե-
« ռանի»։ — Փափագելի էր այս ազամորդւոց
անգտանելի խոտին զէթ անունը ստոյգ
գտնել. խոտն այլ կրիայէն մուրալու է, իր
մեծ օգտութեան համար, և այս աւելի
դիւրին է. վասն զի, « Յորժամ կրիայն ձուս
« ածէ, փորէ զգետինն, թզաչափ մի փոս
« անէ, և ի մէջ փոսուն ածէ զձուն. և
« ինքն գայ եղեր փոսուն, և հայի հանապազ
« դէպ ի ձուն, և ձագս հանէ. և յորժամ
« գտանես զկրիային հաւկիթն՝ բոլոր փոսուն
« մանար փայտ շարէ. գայ կրիայն և տե-
« սանէ զբոլոր փոսուն փայտ շարեալ, երթայ
« խոտ մի գտանէ և բերէ քսէ ի փայտերն,
« և խորտակին. և դու պատրաստ կացիր.
« յորժամ որ ի բերանն առնու և բերէ,
« դու պատրաստ կացիր, առ։ Եւ շատ ի-
« բաց օգտութիւն ունի. թէ փակեալ դրան
« մի վրան քսես, բացվի Աստուծով. և թէ
« կոպոզաք մի առանց բանալիքով ի վերան
« քսես, բացվի Աստուծով. և այլ, շատ օգ-
« տութիւն կայ ի խոտս այս»։

Քանի մի տող (գ) Տգրբկի վրայօք գրե-
լով, նոր զանազանութիւն մի կ'ընէ կենդա-
նեաց այս ցեղին, և կ'ըսէ. « Այսմ հետէ
« ըսկիսքն արասցուք ի Թիւնաւորացն՝ վիշա-
« պաց և օձից և իժից քարբից և այլ թիւ-
« նաւորաց։ (դ) Հայ. Վիշապ. Թուրքի Էժ-
« տերհայ. Եպնի Սինան (Լպու Սինա) ասէ.
« Վիշապին մեծն 30 կանգուն կու լինի.
« մեծ աչվի և շատ ատամունք ունի. ունքվին
« կու երկրննայ կու գայ զաչվին կու ծածկէ.
« վիզն հատ կճուղ կճուղ կու լինի։ Լինի
« որ անասունքն կուլ կու տայ, և ինքն
« երթայ ի ծառ մի փաթութէ զագին, մինչեւ
« որ կուլ տուած անասունքն մարսուվի։
« Տաճկաց թվին 624 (1228) ի Հալապ
« քաղաքին բոլորն վիշապ մի յայտնեցաւ,
« ինչ տեղ որ անցաւ՝ այրեցաւ պտղածառերն,
« և այլ բազում արտորայք և այգիք այրեցան,
« և մարդիկն ցրուեցան ի բոլորն, անչէն և
« անտէր մնաց. Աստուած ողորմեցաւ. օր
« մի ամպեց և մթացաւ. էջ ամպն որոտա-
« լով, էառ զվիշապն, ոլորելով բարձրացաւ,
« մինչեւ որ այլ չերեւեցաւ, շուն մի ագին
« փաթութեց, և այրելով ի հետն գնաց և
« այլ չի երեւեցաւ։ — Վիշապն օգուտ շատ
« ունի. եղն, մորթն, ատամն և այլ տեղն՝
« ամենայն իրաց մի օգուտ է»։ Այսչափ
ըսելէն ետեւ՝ կ'աւելցընէ Աբրահամ. « Ապա
« օրինակն չի գտաք, վասն այն չի գրեցաք».